ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 02

Փամբակ համայնքի ավագանու 2023 թվականի փետրվարի 14-ի հերթական նիստի.

գ. Փամբակ Ավագանու նստավայր

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ, ավագանու անդամ Սամվել Անանյանը:

Մասնակցում էին՝

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սամվել Անանյանը, Արայիկ Քոչարյանը, Աշոտ Անտինյանը, Սերյոժա Սարդարյանը, Էմմա Գասպարյանը, Պավլիկ Պապինյանը, Շուշանիկ Հակոբյանը և Գրիգոր Կարապետյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սասուն Մարանդյանը, Նաիրա Հարությունյանը և Թիանա Բոջուկյանը:

Նիստից բացակայում էին.

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության ավագանու խմբակցության անդամներ՝ Սուրեն Կոստանդյանը, Արմենուհի Ոսկանյանը և Արշակ Սրապյանը:

«Բարգավաճ Հայաստան» կուսակցության ավագանու խմբակցության անդամ՝ Սևակ Խաչատրյանը:

ՆԻՍՏԸ - Նիստը վարող Սամվել Անանյանը ժամը 13.00-ին նիստը հայտարարեց բացված:

Նիստը վարողն իր նախաձեռնությամբ առաջարկեց օրակարգի մեջ ներառել և քվեարկել որպես լրացուցիչ 6-7-րդ հարցեր և որոշման նախագծեր հետևյալ բովանդակությամբ.

6. Փամբակ համայնքի Դեբետ գյուղի գրադարանի մեկ գրադարակը Ռաֆիկ Պետրոսյանի անվամբ անվանակոչելու մասին:

զեկ. Ա. Սարգսյան

7. ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

Կողմ՝ 11 ձայների համաձայնությամբ որոշումների նախագծերն ընդգրկվեցին օրակարգում:

Նիստը վարողն առաջարկեց հաստատել օրակարգը լրացուցիչ որոշման նախագծերով:

Կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

Հաստատվեց օրակարգը, ինչով էլ սպառվեց ներկայացված օրակարգի առաջին հարցը.

Հաստատված օրակարգը՝

1. Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու **մասին:**

զեկ. Լ. Անդրիասյան

2. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու **մասին:**

զեկ. Կ. Շերմազանյան

3. Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրված սոցիալական օգնության մասին:

զեկ. Լ. Անդրիասյան

4. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փափոխություններ կատարելու մասին:

զեկ. Կ. Շերմազանյան

5. Փամբակ համայնքի Դեբետ գյուղի գրադարանի մեկ գրադարակը Ռաֆիկ Պետրոսյանի անվամբ անվանակոչելու մասին:

զեկ. Ա. Սարգսյան

6. ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

զեկ. Ռ. Մինասյան

7. Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին:

զեկ. Ս. Անանյան

ԸՆԹԱՑՔԸ՝

1. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչները սահմանելու **մասին հարցի նախագիծը:**
- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատող Լիլիթ Անդրիասյանը:
Զեկուցողը ներկայացրեց, որ Փամբակ համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու չափորոշիչներում, մասնավորապես ընտանիքի համալիր

գնահատման և ընտանիքի կարիքների գնահատման սանդղակում անհրաժեշտ է կատարել մի շարք փոփոխություններ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

2. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2022թ-ի գույքագրման փաստաթղթերի հաստատելուց հետո համայնքի կարիքների համար ձեռք բերված գույքը համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասի ավագանու առաջիկա նիստում անհրաժեշտ է մուտքագել գույքագրման ցուցակներում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

3. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրված սոցիալական օգնության մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ սոցիալական աշխատող Լիլիթ Անդրիասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ 2022թ-ի ընթացքում Փամբակ համայնքի բյուջեից համայնքի թվով 34 ընտանիքի հատկացվել է ընդհանուր 1290000 ՀՀ դրամի սոցիալական օգնություն:

Ավագանուն տրվում է հաղորդում, որպես ի գիտություն, սոցիալական աջակցություն ստացած ընտանիքների վերաբերյալ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

4. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ավագանու 2022 թ-ի դեկտեմբերի 27-ի թիվ 154-Ն որոշման մեջ փափոխություններ կատարելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ Կիմա Շերմազանյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ առաջարկվող փոփոխություններով նախատեսվում է ՀՀ կառավարության փետրվարի նիստով հաստատված «Փամբակ համայնքի Լեռնապատ բնակավայրի 10-րդ փողոցի նորոգում սալարկմամբ՝ տուֆապատման միջոցով» սուբվենցիոն ծրագրի համար պետության կողմից տրամադրված 22606600 ՀՀ դրամը մուքագրել բյուջեի եկամտային մաս և ուղղել համապատասխան ծախսային հատված՝ կապալառուին վճարելու նպատակով:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

5. ԼՍԵՑԻՆ – Փամբակ համայնքի Դեբետ գյուղի գրադարանի մեկ գրադարակը Ռաֆիկ Պետրոսյանի անվամբ անվանակոչելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի Դեբետի վարչական ղեկավար Անուշ Սարգսյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ Դեբետ գյուղի գրադարանի մեկ գրադարակը մասնագիտացված է իրավաբանական ուղղությամբ, որտող պահպանվող գրեքիրի մեծ մասինի հեղինակը Ռաֆիկ Պետրոսյանն է, իսկ ամբողջ գրքային ֆոնդը գրադարանին է նվիրվել Ռաֆիկ Պետրոսյանի ընտանիքի կողմից: Առաջարկվում է գրադարակը անվանակոչել նրա անբամբ:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

6. ԼՍԵՑԻՆ - ՀՀ Լոռու մարզի Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի կառուցվածքը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին հարցի նախագիծը:

- զեկուցեց Փամբակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ռաիսա Մինասյանը:

Զեկուցողը ներկայացրեց, որ համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի համայնքի ավագանու մինչև յոթ անդամ ունեցող խմբակցությունն ունենում է մեկ գործավար, յոթից ավելի անդամ ունեցող խմբակցությունը՝ մեկ գործավար և մեկ փորձագետ: Առաջարկվում է նշված պաշտոնները՝ 1 փորձագետ և 2 գործավար ներառել համայնքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակում:

Տեղի ունեցան քննարկումներ, որի ընթացքում զեկուցողը և նիստը վարողը պատասխանեցին ավագանու անդամների հարցերին և ներկայացրեցին լրացուցիչ պարզաբանումներ:

Նիստը վարողն առաջարկեց քվեարկել նախագիծը:

Քվեարկությամբ, կողմ՝ 9, դեմ 2 ընդունվեց որոշում:

7. ԼՍԵՑԻՆ - Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը որոշելու մասին հարցի նախագիծը:

- Նիստը վարողն առաջարկեց քվեարկությամբ որոշել Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օրը և առաջարկեց հաջորդ նիստի օր նշանակել 2023 թվականի փետրվարի 27-ը: Առաջարկը դրվեց քվեարկության:

Քվեարկությամբ, կողմ՝ 11, ընդունվեց որոշում:

Փամբակ համայնքի ավագանու հերթական նիստի օր նշանակել 2023 թվականի փետրվարի 27-ը: Նիստի սկիզբ սահմանվեց ժամը 13.00-ն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ

Ս. ԱՆԱՆՅԱՆ

Շ. ՀԱԿՈԲՅԱՆ

Է. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Ա. ՔՈՉԱՐՅԱՆ

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Թ. ԲՈՋՈՒԿՅԱՆ

Ս. ՍԱՐԴԱՐՅԱՆ

Ս. ՄԱՐԱՆԴՅԱՆ

Ա. ԱՆՏԻՆՅԱՆ

Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Պ. ՊԱՊԻՆՅԱՆ